

Srtis Verk'erë

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Ashough Shahnazār (18..-1915). Srtis Verk'erē. 191..

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment possible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ԵՅԴԱԾ

ԱՇՈՒՂ-ՇԱՀՆԱԶԱՐ

ԱՐՏԻՍ ՎԵՐՔԵՐԸ

Աղի նիշեր արձակումից
Թող ալ լուէ մեր բերան
Տանիք իրաւունք մեր գրչին
Ստեղծի հայի ապագան



ՏՊԱԳ-ՐՈՒԹ-ԻՒՆ

Օ. ՍԱԳԱԽԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Դուրջունլու խան թիւ 7, ՂԱԼԱԹԻԱ

Զ Ե Ն

Նիրում եմ զոբոյկս յարգելի

Պ. ԱՆԴՐԱՆԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆՑԻՆ

Իբր յիշատակ անմոռանալի բարեկամութեան

ՀԵՂԻՆԱԿ

Մանկավ. Ռևսուց.

ԱՅՈՒՂ Մ. ՇԱՀՆԱԶԱՐ



2008-129459



ԱՅՈՒԴ Մ. ՇԱՀՆԱԶԱՐ



ՆՈՒԷՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Գտնուում եմ մէկ սոսկ անտառի միջում.

Զբանում եմ արօտներում ու ինքս ինձ մտածում.

Տէր Աստուած ես ի՞նչ գործ ունիմ այս անտառներում
Խօմ խելադար չեմ, կամ թէ որի՞ն եմ փնտրում.

Յանկարծ կացինի ձայնէ ականջովս ընկնում,

Դնում եմ ես սոսկ զիշերէ դողդողում եմ ու խորհում.

Մօտենում եմ մէկ ուրվական եմ տեսնում, այդ ուր-
ուականը

Իւր հրաշտղի պատկերքով - սէկ հրեշտակի էր նմանում.

Սոսկալով ես մօտենում եմ հարցնում. աղաչելով պա-
ղատում եմ

Ու զմոյլւած նրա վերայ եմ նայում.

Ե'մ սիրելի, ի'մ հրեշտակ, ասա՛ ինձ, ո՞վ ես, եւ կամ
ո՞ր տեղից

Եկար, և կամ այդ տախտակները կտրադում ես ո՞ւմ
համար :

Տիրեց օրիորդը, չափազանց յուղեց, երկար

Մտածեց, ահոելի ձայնով ինձ պատասխանեց.

«Երիտասարդս, այդ տախտակները կտրատում եմ քեզ
համար

Սրանցից դադաղ պէտք է շինիմ քեզ համար 1»

Այս լսելով սարսափում եմ ու վախում.
Խորը անտառում մէկ տիսուր երգի ձայն եմ լսում.
Մօտենում եմ մէկ մարմարեայ աւազան,
Որի մէջ նոյն օրիօրդը լւացք էր անում ու տիսու երգում.
Մօտենում եմ ես երկիւղով ու նայում, միթէ նա՞ է
Եթէ՛ նա է, այստեղ ի՞նչ է լւանում.
Ասա՛ խնդրեմ, իմ հրշտա՛կ, ասա՛ ինձ, ո՞վ ես եւ
կամ ո՞ր տեղից
Եկար, եւ կամայս լւացքը լւանում ես ո՞ւմ համար:
«Երիտասա՛րդ, այս լւացքը լւանում եմ քե՛զ համար:
Սրանից պէտք է պատան կարեմ քեզ համար»:
Այս լսեցի, անբողջ մարմնով սարսեցի,
Մէկ ձայն լսեցի որ ասում էր . . .
«Երիտասա՛րդ, այս տեղերից հեռացի, չառ կախարդ է
այդ օրսօրդը, գեղեցիկ ու հմայիչ,
Զգուշացիր երիտասարդ սեւ աչքերն են կախարդիչ».
Խոյս տուի Ես այն տեղերից, վազում եմ խորը անտառի
միջից,
Երբ յիշում եմ այն օրիօրդին, սարսափում եմ սև մահինց
Լսում եմ մէկ ձայն, տարօրինակ ձայն, գետին են քան-
դում,
Հողերը հանում միասին խօսում ու միշտ պսիռում.
Դէալ այն ձայնը ես մօտեցայ կամացով, գուփի շուրջը
հաւաքուած էին նստած էին երկուսով.
Ասէ՛ք խնդրեմ, ի՛մ սիրելիք ո՞վ էք դո՛ւք, և կամ
ո՞րտեղից եկաք, և կամ այդ վոսք գուք վորում էք
ո՞ւմ համար.
«Այս գուփը երի՛տասարդ պատրաստում ենք քեզ համար,
Այս գուփը սլէտք է գերեզման լինի քեզ համար:
Ահա՛ լսիր մեզ, և ճանաչիր մեզ. երկու քոյր էինք,
Սշխար սլըտտեցինք, ոչ մի երկրի մէջ ապրիլ չ'կարցինք,

Հայաստան գալով այստեղ մնացինք, դարերից ի վեր
Այստեղ ենք ապրում, մտքեր պղտորում, հայրը որդւոց
հանում

Իրարու կոտորում. հիմայ այստեղ ենք, և այս կողմերում
Գերեզման փորում, ձեզի պէս մարդկանց մէջը գլորում.
Եթէ կը հաճիս գիտնալ, թէ մեր անունը ի՞նչ է կոչւում,
Հայաստանում մեզ քոյրերիս կոչում են «ԱՆՄԻԱԲԱՆՈՒ-
ԹԻՒՅ» :

Այս ասացին, ինձ բռնեցին, ձեռք ու ոտքս կապելով,
Ինձի փոսը ձգեցին, երբ արթնցայ ու հարցրի, ինձ երազ
էր — ասացին :

—•••••—

Ա.ՐԵԱՆ ԵՐԿՐՈՒՐ ||

Կար մի խեղճ աշխա՛ր, մի արեան աշխարհ,
Որի երկինքն էր մթնա՛ց, խաւարա՛ծ,
Եւ որի կրցքից բխում էր վշտահար,
Արեան արցունքի գետեր սրնիեց :

Կար մի խեղճ աշխա՛րհ, որի զաւակներ
Ա՛խ, չէին ապրում, այլ հիծո՛ւմ, անքո՛ւմ,
Որոնց ոտքերին՝ ծանր շղթաներ, ակօս էր
Զգում, արիւնով ներկում :

Այն տեղ կար միայն մի գեղեցկութիւն
Այն էր խեղճ մարդկանց յստակ մուք արեան,
Այն տեղ միայն մի օրէնք էր իշխում
Արի ու թրի թալանի շրջան . . . :

Այն տեղ լծում էին անասունի տեղ
Խեղճ թշուառ մարդկանց իրենց սայլերին,
Այն տեղ էր իշխում վայրենին ուժեղ,
Իր կտրուկ թրով թշւառի գլխին :

Այն տեղ էր մարդկանց սև սպանտանոց,
Մարդը մորթւում էր ժանդ մարդու ձեռքով,
Մօր կրցքին փարնած մանուկն անխօս,
Իր մօր հետ կիսում լոկ մի հարուածով :

Այն տեղ որոտնէր թնդում սաստկագին,
Արիւն, կայծակներ, սաստիկ շշելով,
Աւեր էր թողնում . . . սև բիթ ուժերէն
Երկինքը մթնում թանձր խահարով :

Այն տեղ քարե՛րը լալիս էին միշտ,
Արիւն ձով երկրէն, երկինքը մթնաց,
Երգում մրմուռը ազգին հոգնավիշտ,
Արտասւում էին մարդկանց հետ գրկւած :

Կար մի խեղճ աշխա՛րն, մի արեան աշխա՛րն.
Որը լափւում էր դայլերի բերնում.
Շղթաների տակ տանջւում չարաչար,
Սգնեցէք մարդիկ, օդնեցէք կանչում :

Այդ մարդիկնէին իմ խեղճ եղբայրներ,
Հայութեան որդիք, ծով թշւարութեան,
Նորանց տանջողնէր, գուզան մարդիկներ,
Արեան երկիրներ, իմ խեղճ Հայաստան :



ՍՈՍԿԱԼԻ ԳԻՇԵՐ . . .

Մութը գիշեր էր, սարսափում եմ ես.

Սարսափում եմ ես երկիւղից դողում.

Ո՞վ աղատեց ինձ Աստուած. մտածում եմ ես
Նա՛, նա՛, որին անունը գիտնալ Զնզի եմ թողում:

Սոսկալի երազ . . .

Ես ինձ գտնում եմ ծովի յատակում,

Ծովը մոայլ էր, մութ, և անկշտում ալիքները
Ինձ-դէպ անդունդ էր նետում :

Զգիտեմ ո՞վ էր. մէկ ուժ ներշնչեց,

Եւ ծովի ափից բարձրածայն կանչեց.

«Իսորտակուխ դու ծով իսաղաղ չինես
Եթէ դու այդ թեղճ իգիթին խեգղես» :

Կատաղի ծովը յանկարծ փրփրեց,

Ալիքները դէպ այն ձայնը նետեց,

«Քաջացի՛ր, Իգի՛թ, կեանքն էլ մէկ ծով է
Եթէ կարող ես դու քեզ աղաաէ :

Օ՛ ցուրտ է, պիտ մեռնիմ ես ծովի խորքերում,

Ծովի յատակից դալիս էր մէկ ձայն այսպէս ասում,
Քաջացի՛ր, Իգի՛թ, անցեալդ գիտե՛մ, արեան դաշ-
տերում


Մահու սարսափի էր չեիր լնկնում, քաջի պէս կուռում:

Հզգաստեցայ ես, քաջելերւեցայ, ինձ դուք նետեցի
Ծովի խորքերից, քաջութեամբ ծովի կուրցքը ճշեցի.

Մօտեցայ ափին, և ի՞նչ եմ տեսնում, բախտաւոր
մարդկանց
Խուռը բազմութիւն, ծովի ափերից հեռաղիտակով
ինձ էին նայում:

Բազմութեան միջից մէկը դուրս եկաւ,
Վստահ քայլերով ինձի մօտեցաւ,
Զեռքդ տուր, իգի՛թ. ձեռքիցս բռնեց,
Առանց վտանգի ինձի ափ հանեց:

Մութը գիշեր է, սոսկում եմ վախում,
Արթնել եմ նստել երկիւղից դողում.
Եթէ հարցանէք այդքան տանջանքից քեզ ով ազասեց,
Ես կ'ասեմ նա՛, որին բոլորդ էիք սպասում,
Որի անունը Սահմանադրութիւն է կոչւում:



ՏԱՐԵՄՈՒՏԻ ԵՐԵԿՈՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նաւեր Մուրատին

Մութն էր. խորին լուռութիւն էր տիրում, անշուք տան
մէջ նստած էր մէկ կին, ու ինքն իրեն մտածում:
Ուր գնաց նա՛, ո՞ւր է արդեօք, ո՞վ սպանից, սրտիցս
անընդհատ արիւնն է ժայթքում.

Մայրական կոկիծը, ճնողական ցաւը, առանց զդալու

Սարեր է շրջում ու ինձ չէ յիշում.

Անիծւիս Գալօ՛ տունդ քանդւի, քո մայրն ու կինն էլ ինձ
Պէս սև կապի, քեզի ապասի.

Եկար գնացիր, տունս քանդեցիր, իմ մին ու ճարիս
գլխահան արիր, ինձնից զրկեցիր, յափշտակեցիր.

Հսում եմ, լսում, արեան աշխատում աներ են քանդում,
օջախներ պղծում, իրար մորթոտում։

Այս իմ որդուս էլ այնտեղ են աարել, իմ տունս քանդել,
Սպանել տուել, ես չեմ իմացել։

Ահա ամեն տուն Ծնունդ են տօնում, իմ խեղճ խրճիթում
չարքերնին նստէլ որոգայթ լարում։

Անէծքի կոյտեր էր որ թափւոմ էին մայրական կուրծքից,
Անկեղծ բերանից, վիրաւոր սրտից։

Գալօն ֆիտայ էր, գիւղերն էր շրջում, մարդ էր հաւա-
քում, այնտեղ ուղարկում։

Այն խեղճ ծնողի տունն էլ էր եկել, տղային տեսել,
գլխահան արել, այնտեղ ուղարկել։

Որդեկորոյս մայրը, մինակ մնացած, որդուն էր սպա-
սում ու միշտ անէծքի կոյտեր էր թափում։

Ամեն կողմերում խորը լոռվթիւն. Մայրը լսում է որ
դուռն են թակում, ու իրեն կանչում։

«Ո՞վ էք, ասէ՞ք ինձ, այս կէս զիշերին իմ դուռն էք
թակում, էլ ի՞նչ էք թողել, ո՞րին էք փնտրում։

Տունս քանդեցիք, մարալիս տարիք, խորտակւած սրտիս
մէջ նոր վէրք բացեցիք,

Անբախտ մայր մի եմ, մայր որդեկորոյս, սպասում եմ
նրան ողբում եմ անյոյս ։»

«Ես եմ մայր, դուռը բաց սրա՛, շատ ցուրտ է դուրսը,
ցրտաման եղայ ։»

Դուռը բացւեցաւ, ներս մոտաւ մէկը, սպառազինւած,
մահուզեր հրացանոր ձեռքումը բռնած։

Մայրը կարծելով որ իր որդին է, բռնում է մարդուն
կուրծքին է սեղմում, մայրական ջերմ համբոյրներ
դրօշմում։

Եւ մէկ էլ յանկարծ կուրծքից շպրտում, բարկացած սրբով հետ հետ է գնում ու պատին կանում :

«Լիրաւոր առիւծի պէս աչքերը հառում, մայրական կուրցքից անէծքներ թափում :
«Ասա՛ ինձ, անդութ, ասա՛, ո՞վ ես ո՞վ, երանի այս իմ
վրէժինդիր ձեռքով

Քո այդ չարանենդ սիրտը կտրատիմ, գուցէ այդպիսով ես
հանգիստ կի լինեմ :»

«Մարէ՛, ների՛ր ինձ, քո խեղճ Գալօն եմ, անարկ բռնապետի ձեռքէն վախսած եմ, այստեղ եկած եմ .

Մա՛րէ, դուրս նայիր, էսկեարը քիւրտը, շրջապատել են
մեր խեղճ խղճիթը .

Մեր դիւզը քանդեցին վերան արեցին, խեղճ ֆէտայներիս բռնել հաճեցին,

Ես ազատւեցայ Զեր սունը եկայ, ի սէր քո որդու ինձ մէկ
ճար արա՛,

Հիմայ այստեղից որ ես ազատւիմ, կգնամ նորից վրէժս
կը լուծեմ :»

«Դուրս, դուրս այստեղից, ան Աստուած անխիղճ դու¹
ոճրագործ ես և ոչ թէ կտրիճ ,

Կտրիճ երիտասարդը խոյս չի տայ կուից, նա չի վախենայ մահու սարսափից .

Դու խարերայ ես, հեռացի՛ր, դնա՛յ, թո՛ղ որ իմ սիրտս
էլ անխռով մնայ .

Ասա՛ ինձ, ասա, անդութ արարած, ո՞րտեղ է լնկել, ո՞ր քարի տակ ին
անքում յառաջում, իր մօրը կանջում .

Ասա՛ ինձ, ասա, անդութ արարած, ո՞րտեղ է լնկած նա
վիրաւորւած, խօսի՛ր ան Աստուած .

Խորտակւի՛ր երկի՛ր, վառւիր քուլ դարձիր, թող ես
• փայ լինիմ դժոխքի բերնին.

Ել ի՞նչ երեսով իմ տունը եկար, քար ու քանդ անելո՞ւ,
Ել ի՞նչ անելու.

Եթէ ես քեզ իմ ձեռքով մորթեմ, արիւնդ խմեմ, այն
ժամանակ միայն ես հանգիստ կը լինեմ :

«Մարէ՛, կաղաչե՛մ, քո որդու սիրո՛յն, կգան կը բռնեն
ու անմեղ տեղը ինձ կը չարչարեն.

Մարէ՛, դո՛ւրս նայիր, երկինքն ալ անդութ, կրակ է
թափում Հայերի գլխին, Հայի օջախին.

Մարէ՛, խղճայ ինձ, արիւն է հոսում ամեն տներում մահ
ու սարսափ է ամէն կողմերում

Մա՞րէ՛, չես լսո՞մ, դէ՛հ մնաս բարեա՛ւ, թող ինձ սպան-
նեն, իմ մայրս ու կինս էլ քեզ սէս կապեն ճամբաս
սպասեն :

Խռոված մարգարէն հրացանը առաւ, ու դուռը բացաւ,
գնալ ցանկացաւ.

Մայրը սթափւեց, ձեռքիցը քոնեց, զայրացած սրտով նո-
րից հետ բերեց, ու դուռը փակեց.

«Ուր, անգո՞ւթ, էլ ուր ես զնում, վիրաւոր սիրաս նո-
րից խորտակում, վէրքեր ես բանում.

«Դու եկար այստեղ որ քեզ պահպանեմ, որդուս փա-
փաքը ես քեզնից առնեմ :»

Մէկ ակնթարթում ծալքերը քանդեց, իւր հագուստներից
մէկ հագուստ հանեց նրան հաղցրեց.

Անկողին փոեց, մէջը պարկեցրեց, ինչպէս մէկ հիւանդ
հոգեւարքի մէջ, ու մօտը նստեց,

Ողբում էր մայրը, մազերը փետում, իւր կուրցքը ծեծում, թշնամու էլ լինին անէծքներ թափում.

Մի քանի վայրկեան դեռ նոր էր անցած, որ ներս են թափւուս տունը խուզտրկում աւերակ անում:

«Ասա՛ մեզ, ասա՛, պառաւ անօրէն, ո՞ւր դրիք նրան, ո՞րտեղ պահեցիք ֆետայ Գալօյին» :

Անտրտունջ մայրը, աղերսում էր խնդրում, անգութ քիւրտ բէգի ոտքերին փարում, ու այսպէս ասում.

«Ինայեցէք ինձ, ես անբախտ կին եմ, որտուս կորցրած տարաբախտ մայր եմ.

Ես չեմ ճանաչում ո՛չ մէկ Գալօյի, հարսս պառկած է մէջ հոգևարքի,

Ի սէր Աստուծոյ շատ մէք գոռգոռայ, թողէ՛ք որ խեղճը հանգիստ հոգի տայ» :

Քիւրդերը զգացին, տարաբախտ կնոջ վերայ խղճացին, հայհոյանք թափելով ելան գնացին :

Մահւան սարսափին էր թագաւորում, սոսկումն էր հսկում ամէն կողմերում.

Հայ վաթանմերի փլատակերում, բայզուշն էր նստած, երգում զմայլում.

Լուսինն էլ վախեցած, ամպերի մէջ էր պահում, ու գաղտնագողի գլուխը հանում.

Լուսը բացւեցաւ. քանդւած գիւղի փլատակներում, մարդիկ էին շրջում, ու նոր տարին աւետում :

(Դպրոցական մենախօսութիւն)



ԳԵՂՐԳ ԶԱՒԻՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նուէր Ա. ԱշԱՄՊԵՆԱՆԻ

Դեռ մոռացութեան ամօթը ճակտիս, և վրէժի զայրոյթը
կ'ւրցքիս, ուխտի եմ գնում.

Լեռ ու դաշտ, սար ու քար, անհուն ծով, առանց նա-
յելու առաջ եմ գնում.

Փնտրում եմ, փնտրում հողա թմբերը, իրար եմ խառնում
էլի չեմ գտնում.

Սրտասուքս աչքերիս, վրէժը սրտիս, գոռում եմ գոչում
նորից հարցնում.

Դաշտ, ասա՛ ինձ ա'նգո՛ւթ, ո՞ւր դրիք նրանց, գոնէ
խղճայ ինձ, տեղը ցոյց տուր ինձ.

Դաշտը չի խօսում, լո՛ւռ, մո՛ւնջ, զէփիւռնէ նրան միայն
վրդովում, անընդատ վրզզում.

Առաջ եմ գնում սիրտս վրդոված, ճշում իմ գոռում,
հարցնում խնդրում.

Խօսիր դաշտ, արիւնոտ վայր, դու տեսար այստեղ այն
ահեղ մարդը, ո՞ւր դրիք ասա՛ Գէորգ Զաւուշը.

Լուռ է ամէն ինչ, գիշերը խաղաղ, դաշտերը մուայլ,
զէփիւրը անխաղ.

Ասաջ եմ գնում ահա մեծ լեռը, արիւնոտ լեռը, նայում
էր հպարա,

Ասա՛ ինձ, ասա՛, Գարայիսար լեռ, անէծքի անուն ո՞ւր
դրիք նրան, այն մեծ հերոսին.

Հեռն էլ չի' խօսում, համրէ սէգ լեռը, լուսինն է նայում
հեկնութեամբ ժպտում:

Սարերի կուրցքից մէկ ձայն եմ լսում, մէկ ահոելի ձայն,
այդպէս էր ասում.

«Լո՛ւռ կաց, ուխտաւոր, լո՛ւռ, ինչ ես պտտում այս
շիրիմներում, ո՞րին ես վնարում.

Շիրիմնես վնարում, հեռացիլ գնայ, ո՞հ զգուշ շարժւիր
ու մի կոխոտիր.

Դու արժէս արդեօք այդ շիրիմներին, որ տեսնել ես
ցանկանում այդ մարդիկներին.

Հերո՞ս ես վնարում, ո՞ւր էիր հապա այն ժամանակներում
երբ մննք մորթւում էինք ժանտ մարդու ձեռքում.

Քաղցած ու ծարաւ թափառում էինք, կուրցքներս բաց
մարտի դաշտումը կոտորւում էինք:

Փամփուշտներս վերջացած, ինքներս շւարած, օգնու-
նութեան էինք կանչում, ձեռքեր կտոկառում.

Հերո՞ս ես վնարում, ո՞հ զգուշ շարժւիր, զայրացած
սրնտով նզովք են կարդում աշխարհի զլիսին:

Ահ, լսի՛ր սրանց, այս շիրիմներում խօսում են խօսում,
միշտ փսփսում.

Պատմում են միսիանց իրենց ցաւերը, թէ ինչպէս ընկան
մարտի դաշտումը.

Այնտե՛ղ է, այնտեղ, ոտքերիդ տակում, այնտեղէն նըն-
ջում ու միշտ մրմնջում.

«Անէ՛ծք թշնամուն, նզո՞վք այն մարդուն, ով կը մոռա-
նայ թշուառ Հայ անուն ո»

Սարսափեցայ ես, էլ ձայն չեմ լսում, դիշերը սոսկ է վախում եմ դողում.

Ուր եմ ես, միթէ այն արեան դաշտում, ուր երեկ միւս օր գետերի նման արի՞ւն էր հոսում.

Ծունկ եմ չոքում ես, ականջ եմ դնում այն հողաթըմքին, որ իւր ընկորը այսպէս էր ասում.

«Բնկե՛ր, լսո՞ւմ ես, ինչե՞ր են խօսում, ինչե՞ր են գոռում ամեն նաւակում, Բոսֆորի ափում».

Կսի՛ր, ի'մ ընկեր, հուրիէթ են գոռում, հաւատա՞նք արդեօք էլ մեղ չե՞ն խափում, . . .

Ինձ զսպել չը կարցի, շիրիմը համբուրեցի, լալով աղերսով նրանց պատմեցի, իմ սիրաս բացի.

Ուրախութիւն Զե՞զ, անմահ հերոսներ, էլ մեղ չե՞ն խափում, մենք համերաշխ ենք ինքներս ինք գործում:

Հանդիստ թող լինի Զեր ոսկորներին, վառք ու պատիւ Զեղ Զեր յիշատակին:

Զեր արիան դնով հանդիստ ենք ապրում, չը մօւանալով միշտ Զեղ ենք յիշում, միշտ Զեղ ենք օրհնում:

Լոեց շիրիմը, էլ ոչինչ չասեց, ինձ այնպէս թւեց թէ նայառաջեց, անցեալը յիշեց:

Ինձ այնպէս թւաց թէ նա չեր մեռած, սպասում էր նա աչքերը հառած:

Երբ լսեց ինձնից յուսալի խօսքեր, էլ ձայն չ'հանեց, չ'սպասասխանեց:

Երկար մնացի այն արեան դաշտում, լուռ էին ամենը ու հանդիստ ննջում,

(Թահերական մենախօսութիւն)



ՖԻԴԱՅԻ ԿԻՆԸ!



Ամեն կողմում նոր տարի էին տօնում,
Ամեն տան մէջ հրճւանքն էր թագաւորում,
Մէկ կին նստած աղերսում էր Աստուծան
Արտասւախառն նոր տարի էր տօնում :

Մինակ էր նա , չուներ ոչ ոք միսիթարող ,
Ոչ ոք չկար նրա վերքերը_ամօքող .
Վեր ելաւ նա , իւր խորտակւած սրտի յետ ,
Դաշտը գնաց , նրա միսիթարողը այնտեղ էր :

«Դաշտ , ասա՛ ինձ ա'նգութ , օւր է հողաթումբը
նրա ,
Ես կինն եմ , մէկ դժբախտ կին , ես նրան եմ
վինտրում .

Պիտ շնորհաւորեմ ազատ նոր տարին նրա'
Հեկ հեկալով լաց էր լինում , ու նրանց հանդիսար
վրդովում :

Գտնում է մէկ հողաթումբ , ու նրան վարւում ,
Համբուրում քարերը , ու այսպէս ասում .
«Կարօ՛ ջան , կարօ՛ , աչքերդ բաց սրա ,
Ազատ նոր տարի է էլ մի վախենայ :

Կարօ՛ ջան խղճայ ինձ , ես քո Մարօն եմ ,
Քո դժբախտ , քո տանջւած , քո խեղճուկ կինն եմ .
Մինակ մնացի էլ ոչ ոք չունեմ
Անյոյս , անմիսիթար , քեզ մօտ եկած եմ :

Հողաթումբ, լուռ ես, խօսիր ան Աստուած,
Աղիղ օրէ, Ես տանը մինակ եմ նստած,
Եկայ աւետեմ Ձեզ աղատ նոր տարին,
Հրճւանքը, ուրախութիւնը, տարաբախտ Հային :

Հողաթումբից մէկ ձայն էր գալիս, այսպէս էր ասում.
«Մարօ՛ ջան, Մո՞րօ՛, հեռացիր, գնայ՝,
Թող որ մեր սիրտն էլ անխռով մնայ,
Մենք շատ ուրախ ենք այս հողաթմբում:»

Մենք էլ ենք տօնում աղատ նոր տարին,
Բարիք ցանկանում, քաջ ֆիդայներին.
Մարօ՛ ջան թող գնայ՝, ու հանգիստ եղիր,
Բարեւներս տար, մեր լնկերներին հաղորդիր» :

Մարօն համբուրեց այն հողաթումբը,
Եւ երկու կախիլ արտասուք թափեց,
Հետ գարձաւ դիւղ, եւ նրանց կողմից
Մեծ նոր տարին աւետեց :



ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Տեսել ես ընկեր, ալեկոծումը ահեղ օվկեանի,
Ուր երկու սլիք շարժուն սարի պէս իրար են վազում.
Իրար են վազում փրփուրը բերնին յովաղի նման.
Ու յոխորտալով զարնուում, յուզւում,
և աղյում, փշրւում աւազի նման :

իսկ երբ անցնում է վրէժի րոպէն—յուզումը վայրի ,
Տեսն ևս ինչպէս հանդստանում է հսկան ջրերի
Մեղմանում է նա , մանուկի նման ժպտում է ալիք
Ալիքի միջից մի երգ աննման , ծփալով մեղմիկ շոյում
ալիքին :

Լսե՞լ ես , ընկե՛ր , ըմբոստ երկնքում կոչը որոտի ,
Որ գղրդումէ որպէս մի պայթիւն մեծ թնդանօթի .
Տեսն ևս ինչպէս ամպերի կուրցքին կայծակը զիկ-զակ :
Իւր նետնէ մխում փութկոտ շեշտագին ու անցնում աշ-
խարհք
Կամ ինչպէս փութով ծառս—ծառս է լինում , ցասկոտ
փոթորիկ :

Հսկայ ծառերին չոքէչոք անում դարձնում խաչալիք ,
Մինչ որ տեղում է հեղեղը վայրագ—և ինչպէս փրկանք
Ծանր երկունքից ազատում աշխարհք .
Բնութիւնը յաղթ ժպտում է հտպա պայծառ արեգին ,
Որպէս պատսախան չար արհաւիրքին :

Լսե՞լ ես ընկե՛ր , ծննդականի ճիչը յուսահատ ,
Որ գալարւելով արգանդի ցաւից պոռում անընդհատ .
Վիրաւոր ընկած այն էզ առիւծն է , այնպէս մոնչում ,
Երկունքի ժամին մեծ ազատութեանը , օգնութեան կան-
չում :

Կեանքի և մահու պայքարը մղող , այն մարդն է տանչ-
ւող :

Իսկ երբ հասնումէ յուսոյ բախտաւոր Ժամը փրկաւէտ ,
Տեսն ևս , ինչպէս այդ խորհրդաւոր վեհ պայթումից հետ
Մի վսեմ , խաղաղ մայրական ժպիտ , —դէմքը զարդարում :

Այդպէս պիտ լինի եւ այն վեհ ժամը յեղափոխութեան
Երբ որ կը բախէն իրար հակառակ երկու ախոյան .
Ալիքի նման պէտք է մանչան երկու հզօր ուժ,
Աշխարը ցնցեն , ու դարձնեն կործան , կարգերը վաս
ուժ :

Վայրագ հեղեղի , շանթ ու փոթորիկ տեղի պիտի տայ ,
հեղեղ ցնծութեան . . .

Հեղեղի միջից մանուկը ծնի մեծ աղատութեան . . .
Էնկե՛ր , ի'մ ընկեր , հեռու չէ օրը , այս օր չէ վաղը ,
Նա պիտի լինի անխուսափելի . . .
Պատրաստէիր կուրցքով ընդունել նրան :

—————

ՀԱՅ ԱԶԳԸ ՍՈՒ ԱՍԻԱԾ

Ա՛խ դու Աստուած Հայոց աղզին
Մինչ ե՞րբ լինիս մոռացող ,
Նա իւր կեանքում երբէք քեզի
Ահ , չէ եղել ուրացող :

Միթէ չկա՞յ այդ սրտումդ
Աստուածային գութ խղճմանք ,
Որ չես ուզում սրբել հայի ,
Այս դարեւոր չարչարսն :

Մենք քո յո՞յսով այս քա՞նի դար ,
Մեր տուները քանդեցինք
Մենք քո յոյսով այս քա՞նի դար
Մեր փառքերից զրկւեցինք :

Յիմայտ սպիր, թէ կը հաճիս
Մեզ քոջ առաջնորդ եղիր,
Առաջնորդէ, ասպարէզ քեզ,
Մեզ զեկավար դու եղիր:

—————

ՄԵԾ ՀԵՂԻՆԱԿԻ ՄՏՔԵՐԻՑ

Նուէր դպրոցականներին.

Եկ տուր, մայրիկ, իմ զրիչը,
Ժամանակ չէ նոշելու,
Ազառ մամուլը ինձ կը կոնչէ,
Ասպարէզ է գործելու:

Մի՛ մոռանար անուշ մայրիկ
Գրող մարդիք շատ շատ կան,
Գրիչը շինել են անարկ գործիք
Լուրջ զրողներ շատ քիչ կան:

Ասպարէզը Հայ մարդունն է
Ով որ ունի Հայի սիրու,
Դա ասպարէզ, յաղթան ակէ,
Լուրջ զրողն է քաջասիրու:

Գրի՛չ, արի պատմիր մարդկանց,
Ո՞վ էր Հայը... ո՞ր անդից ծաղում առաւ
Խւր ծաղումից միշեւ յիմայ,
Խ՞նչ անցեալներ ունեցաւ:

Մինչեւ այս օր բռնակալը
Զախջախեց մեր զրիչը
Այսուհետեւ սլատմիր զրիչ,
Խ՞նչ կը մինի Հայի վիճակը:

Չար ատելութեան անարգ լծիտակ

իսպառ ջնջւեցանք ,

Միմեանց ձեռքից միշտ հալածական

Ցիր ու ցան եղանք :

Գրչի հերոսը այսակէս է ստում

Իբրև նախատանք մեզ հանդիմանում .

«Մեծ թերութիւնը մեր համայն կեանքում ,

Այն է որ չունենք ուսում զիտութիւն ,

Եւ սուրբ միութիւն :

—————

ՄԻ՞Չ ԵՐԲ ՀԱՄԲԵՐԵՆՔ

Բաւ է հայեր գլուխ ծռենք

Ժամանակ է գործելու ,

Մեր կորցրած փառքը խլենք

Հայկեան ցեղին բաշխելու :

Քանի մէկ դար մնանք այսակս

Անտուն , անտէր սն իշխան ,

Մեր քաջարի դրիչովը

Մենք պիտ լինինք մեզ պաշտպան :

Թէև եւրոպ միշտ հաշւած է

Հայաստանը սեպհական

Բնական է տղետները

Շատ սխալներ կունենան :

Արդար ճիշեր արձակումից

Թող չլոէ մեր բերան ,

Տանք իրաւունք մեր գրիչին ,

Ստեղծի Հայի ապագան :

Հայի ապագան ստեղծւած էր
Որ գրչով զենքով գործէինք,
Մեր դատը միշտ պահպանւած էր
Եթէ միացած գործէինք :

Դժբախտաբար չար նախանձը
Հայի միջից չվերջացաւ,
Դրա համար Հայի ցաւերը
Օրսոտ օրէ աւելցաւ :

Թող նախանձէ բռնակալը
Մեր Համերաշխ գործերում,
Գրիչը, զէնքը թաղաւորէ
Հայաստանի խորքերում :



(ԲԱՆԻՈՐԻ ԵՐԳԸ)

Թ. Ռ Օ Շ Ա Ա Բ

Երազ տեսայ թէ զարնւած եմ կուի մէջ, ու արիւն քամ
եղած վէրքից .

Կամաց ընկնում . . . գլորուում եմ իմ դիրքից .

Եւ դրօշակը ցողւած իմ արիւնից, վայր եւ ձգում իմ
ձեռքից . . .

Եւ դո՞ւ, քոյրի'կ, այդ նեղ ժամին վրայ հասար նրան
իսկոյն փրկեցիր .

Անքոխի մէջ նորից հպարտ պարզեցիր .

Տեսայ որ դու կորիւնի պէս խոյալով .

Զգտում էիր դէսլի առաջ, ամբոխի հետ, գրոհ տալով,
ահ այնպէս ընկար, ինչպէս եւ ես, հեւալով .

Իսկ դրօշք ներկւեց մեր ջերմ արիւնով .
Ահես տեսայ , ի՞նչպէս նորից անվիատ ,
Խիզախ , եռուն ամբոխի մէջ միշտ դրօշք հարալատ .
Հնկերները մի վարկեանում , արնոտ ձեռքիցդ են
առնում .

Նորից կուի մէջ նետւելով թէ մեռցնում են թէ մեռ-
նում . . .

Եւ դեռ երկար ծածանում էր մեր դրօշք Մարտական
Քաջի նման մերթ բարձրանում , մերթ ըմկնում ,
Իսկ նրա ալ թեւերի մէջ իմ արեան հետ առնական
Տեսնում էի դեռ չ'սառած քո արիւնն էր շողջողում :

Թարգ. Գ. Վիաաիկինից



ՆԻԵՐ ԲԱՆԻՈՐԻՆ

Յառաջ , բանւոր , մի վհատիր ,
Նետւիր անվախ գէպի կոիւ ,
Մայր Ռուսաստանը եկ ազատիր ,
Փրկենք մեր կեանքն ու պատիւ :

Թէ պատահի որ մենք մեռնինք
Աքսորում կամ բանտերում ,
Դործն է անյաղթ , այն պիտ թողնենք
Հայ սերունդի սրտերում :

Թող բանտերում մերոնք մաշւէն
Թող գաղէն մեզ կրակով ,
Աքսորավայր թող մեզ քաշէն ,
Պատժէն մահով , տանջանքով :

Թէ պատահի թող մեզ կախեն
Աքսորներում, բանտերում,
Դործնէ անմահ. այն կը թողնենք
Հայ սերունդի սրտերաւմ,

Թարգ. Ռուսերէնից

ԱՅՆԻ ՊԱՏՏՈՒՄ

Ա՞ն Զեզ մատաղ բանւոր տղերք
Մէ'կ էլ, մէկ էլ մէկ զա՛րկ տուէք,
Մէկ զարկ տուէք ցարի գահին.
Թող խորտակւի նա՛, հիմնովին :

Միահամուռ մեր ջանքերով
Հերոսների արեան գնով,
Թէև ընկաւ ցարն իր գահից
Չ'խորտակւեց նա հիմնովին :

Այժմ էլ նա է մեզ աղաչում,
Որ խնայենք վերջին չնշում,
Գետին ընկած միշտ մոնշում
Աղաչում է, միշտ պաղատում:

Այս Զեզ մատաղ բանւոր տղերք
Մէ'կ էլ, մէկ էլ մէկ զա՛րկ տուէք,
Մէկ զա՛րկ տուէք ցարի գահին,
Թող խորտակւի նա, հիմնովին :

Թարգ. Ռուսերէնից

ՄԵՌԱՆ, ԶԿՈՐԱՆ:

Էնչպիսի հերոս ընկերներ մեռան, մեռան չը կորան,
Կրակ էր ցայտում նրանց աչքերից, շանթը շրթունքից.
Երբ խօսում էին ծովանքոխի յետ, վիշտ ու կարիքից,
Վրէժի ցասման հրով բորբոքաց նոքա բեմ ելան,
Եւ բեմը դարձաւ արիւնով սեղան զոհերով ներկւած :

Այսօր բանստերում, վաղը աքսորում, միւս օրը կա-
խաղան

Խեղդելու համար, դահիճը դաժան թոք էր պատրաս-
տում

Բայց հերոսների շրթերը սեղմած, նզովք չէր լսւում,
Բաժակէին ըմպում վերածնութեան, սիւներից կախ-
ւած.

Ու հիմը երգում յեղափոխութեան, հպարտ, չը յաղ-
թւած :

Ա՞հ, ազատութեան անպարտ զինւորներ դուք որ ան
խոռվ

Ներկեցիք փողոց ու գործարաններ, Զեր տաք ա-
րիւնով .

Նոյն վայրում այս օր ջահիլ ջիւաններ, ըմբոստ շար-
քերով

Զեր նզովքն են անում, Զեր թափած արեամբ սնւում
ու մեռնում

Եւ զերթ անմահներ երթւում Զեր արեամբ ու հպար-
տանում

Որ դուք հիրաւի, պատւով վեհութեամբ, անմնղ զոհ
դարձաք, մեռաք չը կորաք :



449265

Հեղինակի կողմից լոյս են տեսլ հետեւեալ գրեթը :

—————

1. Մի բաժակ ջուր . (սպառած)	
2. Ովքե՞ր են մեր հարստահարողնորը .	30 կ.
3. Մի սպաններ . (թարգ . Տէր Պ. քահանայից) .	1,50 կ.
4. Բախտաւոր և Դժբախտ անձինք .	2 5կ.
5. Պատիւ : (սպառած)	
6. Ազատութեան օդուտները .	35 կ.
7. Կովկասի վիճակը . (թարգ . Թուսերէնից) .	10 կ.
8. Դէպի Սօսիալ Տէմոկրատիայ .	50 կ.
9. Հայ հերոսին արշաւանքը .	3 դր.
10. Իդէալի Զոհը .	1½ »

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է՝

11. Խորուակուած սէր .
12. Մի թշւառ կեանք .
13. Խափուած հայրը (թատերախաղ)
14. Դաւաճան հայրը (թատերախաղ) Կ. Պոլսոյ կեանքից .

ՊԱՏՐԱՍԻՌԻՄ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ՝

Խ՞ոչ է կնոջ վրէժը .

Ամուսնալուծում . թատերախաղ .

Պտոյտ մը Պոլսոյ մէջ .

Խնտէլիգենտցիան Կ. Պոլսում .

Հայ քիւրովախան .

Մի կաթիլ արխւն .

Լ. Տօլստօյի հայրենասիրութիւնը .

Հայ օրիորդի միթինքը և ճառը Թուստանում .

—————

ԳԻՆ 2 ՂՐԾ.

Դիմել ամէն գրավաճառներին



3 7513 02061133 0

b37